

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայ ոչ-յեղափոխական ընկերութեանց
վարչական ժողովներուն

Բոլոր ոչ-յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու գիւրութիւն ընծայելու համար, Բարիդի հայ Աշխատ. Միութեան վարչական ժողովս կը խնդրէ բոլոր ոչ-յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն որ, եթէ կարելի է, մինչև երկու ամիս, բարեհաճին իրեն ղրկել իրենց պաշտօնական հասցէն և մէկ օրինակ կանոնագիր:

Վարչական ժողովս հրատարակութեան պիտի առայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց և պիտի ղրկէ ամենուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն:

Միութեանս հասցէն է. Mr le President de l'Union des
Travailleurs Armeniens de Paris

96 B-d Picpus

Paris

26 Յունուար 1906 թ.

Բարիդի հայ Աշխատ. Միութեան
վարչական ժողով

ՀԱՅՆԷՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

50 տարի առաջ Փարիզում, հետու իր հայրենիքից, վախճանուեց Եւրոպայի նոր գրականութեան հռչակաւոր ներկայացուցիչներից մէկը, Հենրիխ Հայնէն: Մահը ազատեց նրան առժամեցի տանջանքներից: Նրա բնաւորութիւնը երկար ժամանակ կուտւմ էր օրհասական տկարութեան հետ և օգտուելով ամեն վայկեանից՝ սթափուում էր, որպէսզի նորից փայլէ իր փայլով: Ջայրոյթը, սրամտութիւնը, բանաստեղծական ոգին, այս բոլորը բռնկում էին, երբ ցաւերը զէթ մի փոքր թեթեւում էին և մահուան մինչև վերջին օրերը նա չդաւաճանեց ոչ իր բանաստեղծական կոչին և ոչ էլ իր հայրենիքին:

«Թուղթ և մատիտ» ասաց նա մահուան նախընթաց օրը 1856 թուի փետրուարի 16-ին (ն. տ.). այս գէպքից 3 օր առաջ աշխատեց 6 ժամ շարունակ, բայց նրան էլ չյաջողեց իրագործել իր փափագը. գրիչը վայր ընկաւ ձեռքից, գրութիւնը սկսեց արագ կերպով վատանալ և միւս առաւօտ հոգին աւանդեց:

Եւրոպայի զանազան քաղաքներում այսօր յիշում են տաղանդաւոր բանաստեղծին, յիշում է և գերմանացի ժողովրդի գիտակցող մասը: Նրանք հասկանում են, որ Հայնէի անուանը պատկանում է այն անուանց շարքին, որոնցով պարծենում է գերմանացի ժողովուրդը: Գերմանական գրականութեան այժմեան յառաջադէմ ներկայացուցիչները, ինչպէս օրինակ Հաուպտմանը և այլն, իրանց Հայնէի հետևողներ են անուանում:

Եթէ Անգլիայում դեռ ևս չեն կարողանում զննատեւել Բայրոնին, եթէ Բելգիայի մեռած քաղաքը յամառ կերպով հրաժարւում է իր տաղանդաւոր երգիչ Րոզենբախից, իսկ անցեալ դարերում Ֆլօրենցիան տևական աքսորանքի դատապարտեց իր լաւագոյն քաղաքացի Դանտէին, Գերմանիայումն էլ դեռ չէ դադարել այն վէճը, թէ Հայնէն իսկապէս արժանի է այդ հռչակին և ժողովրդականութեան, թէ մնասակար և անբարոյական հեղինակ է:

Այդ վէճերի շնորհիւ մինչև այժմ Հայնէին արձան չէ դրուած, մինչդեռ շատ երկրորդական գործիչներ արժանացան այդ փառքին:

Այժմ, 50-ամեակի առթիւ, Հայնէյին Գերմանիայում արձան կառուցանելու հարցը նորից է բարձրացրած: Ճանկանք որ իրագործուած տեսնենք այդ բարի միտքը. այդ մտադրութեան իրագործելը շատ կ'ասկածելի է թւում այն դէպքից յետոյ, երբ իր հարազատ քաղաքն անգամ մերժեց Այր հրապարակներից մէկի վրայ յարմար տեղ յատկացնել նորա արձանի համար:

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ